ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 06/21

ք. Գյումրի «19» փետրվարի 2021 թ.

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ք. Ահարոնյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ՀԵՐՄՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Հ.Հլոյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ***10*** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***20*** օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 87450 /ութսունյոթ հազար չորս հարյուր հիսուն/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ___2___ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _2_ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

---

[20] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 ՊայմանագիրնուժիմեջէմտնումԿողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի՝ պայմանագրովստանձնածպարտավորություններիողջծավալովկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

---

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ	«ՀԵՐՄՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ
ք. Գյումրի, «Անի»թաղ. 11փ 5/2	ք. Գյումրի Հաղթանակի 42Ա 1
ՀՎՀՀ 05536355	ՀՎՀՀ 05522575
Հ/Հ 9002180005872950	Հ/Հ 2050122054441001
Գյումրիի գանձապետական բաժանմունք	«Ինեկո բանկ»ՓԲԸԳյումրու մ/6
(ստորագրություն)	(ստորագրություն)
Տնօրեն՝ Բ. Միսրոնյան	Տնօրեն՝ Հ.Հլոյան
Կ.Տ.	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
«19» փետրվարի 2021 թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 06/21 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

<< դրամ

Ապրանքի								մատակարարման			
համարը	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /<< դրամ/	ընդհանուր գինը /<< դրամ/	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակն ըստ ամիսների		
									2	3	9
	33600000	**Դեղագործական արտադրանք**									
1	33631430	Դեքսալգինի փոշի 500մգ	Դեքսկետոպրոֆեն (դեքսկետոպրոֆենի տրոմետամոլ) M01AE17: Ցավազրկող, դեղափոշի 25մգ	հատ	230	1150	5	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5		
2	33661126	Ցիտրամոն 500մգ Sopharma	Ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին N02BA51, N02BA71: Անալգետիկ, արյունը ջրիկացնող, ջերմիջեցնող, հակաբորբոքային դեղամիջոց: Օգտագործում են գլխացավի և հարբուխի ժամանակ:	հատ	10	200	20	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	20		
3	33611170	Նոշպա 40մլ 100հատ	Դոտտավերին, a03ad02, սպազմալիտիկ միջոց, ունի հարթ կմանահյուսվածքի հզոր սպազմալիտիկ ազդեցություն	տուփ	2800	2800	1	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1		
4	33661131	Կորվալոլ 25մգ	Սրտի համար հեղուկ դեղ 100մգ	հատ	200	200	1	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1		
5	33661117	Վալերիանի երեկոյան էքստրակտ 20մգ 50հատ	Սրտի համար, դեղահաբ 20մգ 50 հատ կանաչ	տուփ	400	800	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2		
6	33611200	Իմոդիում 20մգ	Լոպերամիդ a07da03 Օժտված է հակափորլուծության էֆեկտով: Կազմի մեջ մտնող լոպերամիդն օպոիդային ռեցեպտորների ընտրողական սինթետիկ արգելակիչ է: 20մգ	հատ	145	1450	10	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	10		
7	33691232	Նիմեսիլ 2գր	Նիմեսուլիդ M01AX17, M02AA26: Հակաբորբոքային, ցավազրկող միջոց2գր	հատ	140	700	5	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5		
8	33661119	Անալգին 500մգ Sopharma /20 հատ	Ցավազրկող, դեղահաբ 500մգ Sopharma	տուփ	360	360	1	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1		
9	33631230	Բետադին 10% 30մլ	Վերքեր մաքրող, մշակող թույլ մետաղական փայլով բյուրեղային	սրվակ	950	4750	5	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5		

			նյութ, 10% 30մլ								
10	33631250	Սպիրտ բժշական 96% 5լ	Էթանոլ d08ax08, v03ab16, v03az01: Հեղուկ սպիրտ 96% 5լ	հատ	8000	16000	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1		1
11	33661121	Ասպիրին ուպսա , վիտամինC 500մլ /10 հատ/	Ացետիլսալիցիլաթթու a01ad05, b01ac06, n02ba01 Ասպիրին ուպսա, վիտամին C 500մլ /16 հատ/	տուփ	1750	3500	2	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	2		
12	33631240	Դիմաքս բլորի 3.7գր	Դիմաքս բլորի լուծվող հաբեր 3.7գր	հատ	70	49000	700	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	180	285	235
13	33631290	Իզիգել40գ	Ակտիվ նյութ՝ Իբուպրոֆեն, Օժանդակ նյութեր՝ իզոպրոպիլ սպիրտ, դիհիդրոպրոպանոլամին, պոլիէթիլենգլիկոլ, կարբոմեր, մենթոլ և զտված ջուր:	հատ	3540	3540	1	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1		
		Ընդամենը				84450					
	33140000		Վիրակապեր								
14	33141115	Բամբակ 50գր 100%	Բուսական նուրբ սպիտակ թելերի փունջ, որ ստացվում է բամբակենուց:	հատ	150	1500	10	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	10		
15	33141111	Սպեղանի կպչուն 18×70մմ	Առաջին բուժօգնության համար,հիպոալերգիկ, կտորային հիմքով, մարմնագույն, կպչուն:Չափը 18×70մմ:Տուփում10հատ	տուփ	60	600	10	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	10		
16	33141111	Բակտերիցիդ սպեղանի 8*10սմ	Առաջին բուժօգնության համար,հիպոալերգիկ, մարմնագույն, կպչուն: Տարբեր չափերի	հատ	150	750	5	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	5		
		Ընդամենը				2850					
	24410000		Ազոտ պարունակող պարարտանյութեր								
17	24411400	Անուշադիրի սպիրտ 10%, 30մլ	Ամոնիակի լուծույթ 10%, 30մլ	սրվակ	150	150	1	ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2	1		
		Ընդամենը				150					
		Ընդամենը				87450					

Մատակարարման ժամկետը. Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո ամենաուշը 7 աշխատանքային օրվա ընթացքում :

ԳՆՈՐԴ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի»թաղ. 11փ 5/2
ՀՎՀՀ 05536355
Հ/Հ 9002180005872950
Գյումրիի գանձապետական բաժանմունք

(ստորագրություն)
Տնօրեն՝ Բ. Սիսարոնյան
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ՀԵՐՄՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ

ք. Գյումրի Հաղթանակի 42Ա 1
ՀՎՀՀ 05522575
Հ/Հ 2050122054441001
«Ինեկո բանկ»ՓԲԸ Գյումրու մ/ճ

(ստորագրություն)
Տնօրեն՝ Հ.Հոյան
Կ.Տ.

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև նախագիծը մատակարարին ուղարկելը:*

Հավելված N 2
« 19» փետրվարի 2021 թ. կնքված
ԳՈՒԿ-ՄԱ-ԱՊՁԲ 06/21 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

Ապրանքի												
Իրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներիպլանով նախատեսվածմիջանցիկ ծածկագիրը՝ ըստԳՄԱդասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**									
			Հունվար մաս	Մարտ հունիս	Ապրիլ հուլիս	Մայիս օգոստոս	Հունիս սեպտեմբեր	Հուլիս հոկտեմբեր	Օգոստոս նոյեմբեր	Սեպտեմբեր դեկտեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1-13	***33600000***	***Դեղագործական արտադրանք***	40050	60000	60000	60000	60000	60000	60000	84450	84450	84450
14-16	***33140000***	***Վիրակապեր***	2850	2850	2850	2850	2850	2850	2850	2850	2850	2850
17	***24310000***	***Հիմնական անօրգանական քիմիական նյութեր***	150	150	150	150	150	150	150	150	150	150

***Վճարմանենթակագումարներըներկայացվում են աճողականկարգով:*

ԳՆՈՐԴ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի»թաղ. 11փ 5/2
ՀԿՀՀ 05536355
Հ/Հ 9002180005872950
Գյումրիի գանձապետական բաժանմունք

(ստորագրություն)
Տնօրեն՝ Ք. Մհարոնյան
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«ՀԵՐՄՈ-ՖԱՐՄ» ՍՊԸ

ք. Գյումրի Հաղթանակի 42Ա 1
ՀԿՀՀ 05522575
Հ/Հ 2050122054441001
«Ինեկո բանկ»ՓԲԸ Գյումրու մ/ճ

(ստորագրություն)
Տնօրեն՝ Հ.Հոյան
Կ.Տ

Հավելված N 3
« 19» փետրվարի 2021 թ. կնքված
ԳՈՒԿ-ՄՍ-ԱՊՁԲ 06/21 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարվածապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	բանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«19» փետրվարի 2021 թ. կնքված
ԳՈՒԿ-ՄԱ-ԱՊՁԲ 06/21 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրիարդյունքըԳնորդինհանձնելուփաստըֆիքսելուվերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդիանվանումը Վաճառողիանվանումը
(այսուհետ՝ Վաճառող)միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 3
«19» փետրվարի 2021 թ. կնքված
ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 06/21 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ
«ՀԵՐՄՈ-ՖԱՐՄ»ՍՊԸ
ք. Գյումրի Հաղթանակի 42Ա 1
hh2050122054441001
«Ինեկո բանկ»ՓԲԸ
hվhh05522575
տնօրեն՝ Հ.Հլոյան

ստորագրություն

Կ.Տ

Պատվիրատու
«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ
ք. Գյումրի, «Անի» թաղ. 11փ 5/2
hh 9002180005872950
Գյումրուգանձապետականբաժանմունք
Հվhh05536355
Տնօրեն՝ Ք. Ահարոնյան

ստորագրություն

Կ.Տ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«23» «փետրվարի» 2021 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **Պետության կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագիր**

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «19» «փետրվարի» 2021թ.

Պայմանագրիհամարը՝ ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 06/21

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով «22» «փետրվարի» 2021թ. դուրս գրված N Բ2462347033 հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարվածապրանքների							
	Անվանումը	Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակականցուցանիշը		կատարմանժամկետը		Վճարման ենթակագումարը /հազարդրամ/	Վճարման ժամկետը /ըստվճարմանժամանակացույցի/
			Ըստ պայմանագրով հաստատվածգնման ժամանակացույցի	փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		
1.	Անուշադիրի սպիրտ 10%, 30մլ	Ամոնիակի լուծույթ 10%, 30մլ	1	1	26.02.21	23.02.21	0.15	31.05.2021
2.	Բետադին 10% 30մլ	Վերքեր մաքրող, մշակող թույլ մետաղական փայլով բյուրեղական նյութ, 10% 30մլ	5	5	26.02.21	23.02.21	4.75	31.05.2021
3.	Իմոդիում 20մգ	Լոպերամիդ a07da03 Օժտված է	10	10	26.02.21	23.02.21	1.45	31.05.2021

		հակափորլուծության էֆեկտով: Կազմի մեջ մտնող լոպերամիդն օպոիդային ռեցեպտորների ընտրողական սինթետիկ արգելակիչ է: 20մգ						
4.	Ցիտրամոն 500մգ Sopharma	Ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին N02BA51, N02BA71:	20	20	26.02.21	23.02.21	0.20	31.05.2021
5.	Նոշպա 40մլ 100հատ	Դոտտավերին, a03ad02, սպազմալիտիկ միջոց, ունի հարթ կմանահյուսվածքի հզոր սպազմալիտիկ ազդեցություն	1	1	26.02.21	23.02.21	2.80	31.05.2021
6.	Նիմեսիլ 2գր	Նիմեսուլիդ M01AX17, M02AA26: Հակաբորբոքային, ցավազրկող միջոց 2գր	5	5	26.02.21	23.02.21	0.70	31.05.2021
7.	Կատվախոտի երեկոյան էքստրակտ 20մգ 50հատ /կանաչ/	Սրտի համար, դեղահաբ 20մգ 50 հատ կանաչ	2	2	26.02.21	23.02.21	0.80	31.05.2021
8.	Կորվալոլ 25մգ	Սրտի համար հեղուկ դեղ 100մգ	1	1	26.02.21	23.02.21	0.20	31.05.2021
9.	Ասպիրին ուպսա , վիտամին C 500մլ /10 հատ/	Ացետիլսալիցիլաթթու a01ad05, b01ac06, n02ba01 Ասպիրին ուպսա, վիտամին C 500մլ /16 հատ/	2	2	26.02.21	23.02.21	3.50	31.05.2021
10	Դեկսալգինի փոշի 500մգ	Դեքսկետոպրոֆեն (դեքսկետոպրոֆենի տրոմետամոլ) M01AE17: Ցավազրկող, դեղափոշի 25mg	5	5	26.02.21	23.02.21	1.15	31.05.2021
11.	Սպիրտ բժշկական 96% 5լ	Էթանոլ d08ax08, v03ab16, v03az01: Հեղուկ սպիրտ 96% 5լ	1	1	26.02.21	23.02.21	8.00	31.05.2021
12.	Դիմաքս քլորի 3.7գր	Դիմաքս քլորի լուծվող հաբեր 3.7գր	180	180	26.02.21	23.02.21	12.60	31.05.2021
13.	Բամբակ 50գր 100%	Բուսական նուրբ սպիտակ թելերի փունջ, որ ստացվում է բամբակենուց:	10	10	26.02.21	23.02.21	1.50	31.05.2021
14.	Անալգին 500մգ	Ցավազրկող, դեղահաբ 500մգ	1	1	26.02.21	23.02.21	0.36	31.05.2021

	Sopharma/20 հատ	Sopharma						
15.	Իզիգել 40գ	Ակտիվ նյութ՝ Իբուպրոֆեն, Օժանդակ նյութեր իզոպրոպիլ սպիրտ, դիիզոպրոպանոլամին, պոլիէթիլենգլիկոլ, կարբոմեր, մենթոլ և զտված ջուր:	1	1	26.02.21	23.02.21	3.54	31.05.2021
16.	Բակտերի ցիդ սպեղանի 8*10սմ	Առաջին բուժօգնության համար, հիպոալերգիկ, մարմնագույն, կպչուն: Տարբեր չափերի	5	5	26.02.21	23.02.21	0.75	31.05.2021
17.	Սպեղանի կպչուն 18×70մմ	Առաջին բուժօգնության համար, հիպոալերգիկ, կտորային հիմքով, մարմնագույն, կպչուն:Չափսը 18×70մմ: Տուփում 10 հատ	10	10	26.02.21	23.02.21	0.60	31.05.2021

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

Ստորագրություն

Հ.Հլոյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ապրանքն ընդունեց

ստորագրություն

Արամ Գասպարյան

ազգանուն, անուն

Կ.Տ.

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
22	Փետրվար	2021 թ.		Բ	2462347033
[4] Առաքման ամսաթիվ					
23	Փետրվար	2021 թ.		Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
				Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)
[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի										
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	5	5	2	2	5	7	5		
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[10] Անվանումը	ՀԵՐՄՈ-ՖԱՐՄ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)									
[11] Բանկային տվյալները	Ինեկո բանկ			N 2050122054441001						
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԳՅՈՒՄՐԻ Հաղթանակի 42Ա 1									
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ԳՅՈՒՄՐԻ Հաղթանակի 42Ա 1									
[14] Լրացուցիչ տվյալներ										

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի								
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	5	5	3	6	3	5	5
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ,ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)							
[18] Բանկային տվյալները	Գյումրու գանձապետական բաժանմունք			N Հ/Հ 9002180005872950				
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ՇԻՐԱԿ ԳՅՈՒՄՐԻ ԳՅՈՒՄՐԻ Անի թաղ. 11փ. 5 2							
[20] Լրացուցիչ տվյալներ								
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						
[22] Մատակարարման (առաքման) եղանակը	ինքնաառաքում							
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԳՅՈՒՄՐԻ ԱՆԻ ԹՂՄ. 11 Փ. 5 2							

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Տարա	Այդ թվում՝ բնապ. հարկ	Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Անուշադիրի սպիրտ 10% 30 մլ	ֆլ	1	150		150			
2	Բետադին 10% 30 մլ	ֆլ	5	950		4750			
3	Իմոդիում 20մգ N 1	հատ	10	145		1450			
4	Ցիտրամոն Պ N 10	տուփ	2	100		200			
5	Նոշպա 40 մգ N100	տուփ	1	2800		2800			

6	Նիմեսիլ 2գրամ N 1	տուփ	5	140		700			
7	Կատվախոտի երեկոյան էքստրակտ 20 մգ N 50	տուփ	2	400		800			
8	Կորվալոլ 25 մլ	ֆլ	1	200		200			
9	Ասպիրին ՈՒՊՍԱ N 10	տուփ	2	1750		3500			
10	Դեկսալգին փոշի 25մգ N 1	տուփ	5	230		1150			
11	Սպիրտ բժշկական 96% 5000մլ	ֆլ	1	8000		8000			
12	Դիմաքս քլորի լուծվող հաբեր 3,7գ	հատ	180	70		12600			
13	Բամբակ 50գր	տուփ	10	150		1500			
14	Անալգին 500մգ N 20	տուփ	1	360		360			
15	Իզի գել 40 գ	տուփ	1	3540		3540			
16	Բակտերիցիդ սպեղանի 8X10սմ N 1	տուփ	5	150		750			
17	Սանթավիկ /կպչուն սպեղանի/ 18x70մմ N 10	տուփ	10	60		600			
Ընդամենը						43050	X		

Առաքող՝ IVANYAN ARTUR 2809710279
(անուն, ազգանուն)

Ստացող AHARONYAN KNARIK 5708640316
(անուն, ազգանուն)

22/02/2021 19:55:03

23/02/2021 18:55:55